պատասխանողից պետական տուրքի բռնագանձման պահանջ չի ներկայացրել, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Դատական այլ ծախսեր չկան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը.

ՎՃՌԵՑ

Հայցը բավարարել:

Անվավեր ճանաչել պատասխանող «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 10.08.2023թ. «Ռոմա» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/62 որոշումը:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 02.10.2023թ. որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցը պահպանել՝ մինչև վճռի կատարումը:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԴԱՏԱՎՈՐ **Գ. ՄԱՋՄԱՆՅԱՆ**

Ծանոթություն. Վճիռն օրինական ուժի մեջ է մտել՝ 20.10.2023թ.:

ԴԱՏԱՎՈՐ **Գ. ՄԱՋՄԱՆՅԱՆ**